ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Որոշման ընդունման անհրաժեշտությունը Սիսիան համայնքի միավորումից ու վերակազմակերպումից բացի պայմանավորված է նաև 2023 թվականի հունվարի 1-ից նվազագույն ամսական աշխատավարձի փոփոխությամբ, համաձայն որի նվազագույն աշխատավարձը 68000 /վաթսունութ հազար/ ՀՀ դրամից բարձրացվել է 75000 /յոթանասունհինգ հազար/ ՀՀ դրամ:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ
ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ Ա. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

Որոշման հաստատման դեպքում աշխատավարձի ֆոնդը նախորդ տարվա համեմատ կավելանա 85 միլիոն ՀՀ դրամով:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ
ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ Ա. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Նկատի ունենալով Սիսիան համայնքի խոշորացումն ու աշխատատեղի պահանջարկը՝ առաջարկում ենք հաստիքացուցակում ավելացնել հետևյալ հաստինքները՝

1. Նախկին Գորայք համայքի հաստիքացուցակում ընդգրկված գրադարանային գործունեության պատասխանատուների 4 հաստիք՝ 0,5 միավորով և՝/ընդգրկել Համո Սահյանի անվան քաղաքային մշակույթի կենտրոն ՀՈԱԿ-ի ի կազմի մեջ/:
2. Գրադարանավարի 0,5՝ դրույք՝ Տորունիքում
3. Մշակութային գործունեության համակարգող՝ 1 հաստիք՝ 1 միավոր դրույքաչափով:
4. Աղվան Մինասյանի անվան մշակույթի կենտրոն ՀՈԱԿ-ում՝ 1 հաստիք՝0,5 դրոյքով՝ որպես խոհարար-հրուշակագործ, գիշերային պահակի 2 հաստիք, ֆոտովոլտային կայանի օպերատոր 1 հաստիք՝1 միավոր դրույքաչափով:
5. Ֆուտբոլի դպրոց ՀՈԱԿ-ում՝ գործավարի 1 հաստիք՝ 0,5 դրույքաչափով
6. Էմմա Ասյանի անվան մանկական երաժշտական դպրոց ՀՈԱԿ_ում՝ բանվորի 1 հաստիք՝ 0,5 դրույքով
7. Շախմատի դպրոցում՝ գործավար-օպերատորի 1 հաստիք՝ 0,5 դրույքով
8. Համո Սահյանի անվան քաղաքային մշակույթի կենտրոն ՀՈԱԿ-ում՝ բանվորի 1 հաստիք՝ 0,5 դրույքով

Աշխատակազմի կրթության, մշակույթի, սպորտի, երիտասարդության, առողջապահության և սոցիալական հարցերի բաժնի պետ՝ *Ն. Հովհաննիսյան*

25.04.2023թ

ՏԵՂԵԿԱՆՔ

Սիսիան համայնքի ավագանու որոշման նախագծի ընդունումից հետո, համայնքային բյուջեի ծախսային մասում համապատասխանաբար փոփոխություն կկատարվի:

Աշխատակազմի կրթության, մշակույթի, սպորտի, երիտասարդության, առողջապահության և սոցիալական հարցերի բաժնի պետ՝ *Ն. Հովհաննիսյան*

25.04.2023թ